



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Արմվյան 52^ա • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52^а •
52^a Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37,
armphilology@ysu.am, www.ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 5

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝ 2023 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 22 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. 2022 – 2023 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում /զեկուցող՝ Ա. Սարգսյան/:
2. Հեռակա ուսուցման մագիստրատուրայի ավարտական աշխատանքների պաշտպանության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը:
3. ԵՊՀ գիտական խորհրդի ընտրովի անդամի առաջադրում և ընտրություն:
4. Հայագիտական ուսումնասիրությունների համահայկական հիմնադրամին առաջարկվող գիտաժողովի և հետազոտությունների քննարկում և հաստատում:
5. Ուսանողների 2021-2022 ուստարվա հարցման տվյալների քննարկում:
6. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 24-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ արդեն ամփոփվել են նաև առաջին լուծարքային

շրջանի արդյունքները, ուստի ինքը կներկայացնի քննաշրջանից և առաջին լուծարքային շրջանից հետո առկա թվային տվյալները: Քննաշրջանից հետո բակալավրիատի առկա ուսուցման առաջին կուրսում պարտքեր ունեին 8, երկրորդում՝ 25, երրորդում՝ 25 և չորրորդում՝ 32 ուսանողներ: Մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերից յուրաքանչյուրում եղել է պարտք ունեցող երեք ուսանող: Առաջին լուծարքային շրջանից հետո բակալավրիատի առկա ուսուցման առաջին կուրսում պարտքեր ունեն 4, երկրորդում՝ 10, երրորդում՝ 11 և չորրորդում՝ 14 ուսանողներ: Լուծարքային առաջին շրջանից հետո մագիստրատուրայում պարտք ունեցող ուսանող չկա: Դոց. Ա. Սարգյանը նաև ընդգծեց, որ նախորդ տարիների նման պարտք ունեցող ուսանողների մեծ մասը պարտք ունի մեկ առարկայից:

Օրակարգի 2 - րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ բ. գ. թ. , դոց. Ա. Սարգսյանին, ով ընթերցեց հեռակա ուսուցման մագիստրատուրայի ավարտական աշխատանքների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ բ.գ.դ., պրոֆ. Վաչագան Գրիգորյանի հաշվետվությունը, որում մասնավորապես նշված էր.

2022-23 ուստարում հեռակա ուսուցման ՏՀայոց լեզու և գրականություն/ մասնագիտությամբ մագիստրոսական թեզ է պաշտպանել 7 ուսանող, որոնցից հինգը՝ հայ գրականությունից, երկուսը՝ հայոց լեզվից:

Մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքներն են՝ երկու ուսանող ստացել է «19» միավոր, մեկ ուսանող՝ «18» միավոր, մեկ ուսանող՝ «17» միավոր, մեկ ուսանող՝ «15» միավոր, մեկ ուսանող՝ «14» միավոր, մեկ ուսանող՝ «13» միավոր:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությունն անցել է գործող ընթացակարգին համապատասխան:

Պաշտպանությանը ներկայացված մագիստրոսական թեզերը բովանդակային և կառուցվածքային առումով հիմնականում համապատասխանում էին այդ աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Ուսանողները ներկայացրել էին նաև պահանջվող լուսապատկերային ցուցադրությունը:

Աշխատանքներում, ըստ պահանջի, նշված էին աշխատանքի կատարման նպատակը, խնդիրները, ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը, ներկայացված էր համապատասխան գրականությունը:

Աշխատանքների թեմաներն արդիական էին: Դրանք վերաբերում էին գրականագիտական և լեզվաբանական տարբեր խնդիրների: Պաշտպանությանը մասնակցած ուսանողների մասնագիտական գիտելիքները ընդհանուր առմամբ համապատասխանում էին պահանջվող մակարդակին: Ուսանողները կարողանում

Էին պատշաճ ներկայացնել ուսումնասիրությունը, պատասխանել հանձնաժողովի հարցերին, ուստի ցածր գնահատականներ չնշանակվեցին:

Պաշտպանությանը ներկայացված աշխատանքների կատարման ընդհանուր որակը վկայում էր, որ ղեկավարները և համապատասխան ամբիոնները իրենց աշխատանքը կատարել են անհրաժեշտ մակարդակով:

Ընդդիմախոսները ևս իրենց աշխատանքը կատարել էին ըստ պատշաճի: Գրախոսություններում նշված էին թե՛ թեզերում նկատված վրիպակներն ու թերությունները, թե՛ արված էին այնպիսի առաջարկություններ, որոնք ուղղորդող էին և գիտական այլ աշխատանք կատարելիս կօգնեն ճիշտ կողմնորոշվել:

Որպես ընդհանուր թերություն՝ ցանկանում ենք նշել այն, որ որոշ աշխատանքներում նկատվում էր վերլուծականության պակաս: Ցանկալի է, որ ուսանողներն ավելի վերլուծաբար և քննադատաբար մոտենան եղած տեսակետներին, ավելի ծավալուն ներկայացնեն սեփական կարծիքն ու եզրակացությունը: Այդ հարցում նրանց պետք է կողմնորոշեն ու օգնեն գիտական ղեկավարներն ու մասնագիտական ամբիոնները:

Ընդհանուր առմամբ մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացը ընթացավ պատշաճ մակարդակով:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ բանասիրության ֆակուլտետից ԵՊՀ գիտական խորհրդի ընտրովի անդամի առաջադրման և ընտրության հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ռ. Էլոյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Պրոֆ. Ա. Ավագյանը նշեց, որ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնը ներկայացրել է պրոֆ. Ա. Աբաջյանի, իսկ հայոց լեզվի ամբիոնը՝ պրոֆ. Յուրի Ավետիսյանի թեկնածությունները: Ֆակուլտետի մյուս երկու ամբիոնները թեկնածուներ չեն առաջադրել: Այնուհետև պրոֆ. Ա. Աբաջյանը ինքնաբացարկ հայտնեց՝ նշելով որ հայոց լեզվի ամբիոնը համալսարանի ամենամեծ ամբիոններից է, սպասարկող ամբիոն է, ուստի ամբիոնի վարիչի՝ որպես գիտխորհրդի անդամի թեկնածությունը միանգամայն ընդունելի է: Գիտխորհուրդը որոշեց իրականացնել բաց քվեարկություն, որի արդյունքներով պրոֆ. Յուրի Ավետիսյանը միաձայն ընտրվեց ԵՊՀ գիտական խորհրդի ընտրովի անդամ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Նկատի ունենալով բաց քվեարկության արդյունքները՝ հայ բանասիրության ֆակուլտետից որպես ԵՊՀ գիտական խորհրդի ընտրովի անդամ ներկայացնել պրոֆ. Յուրի Ավետիսյանին:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝

ա/ Լ Ս Ե Ց Ի Ն - Հայոց լեզվի ամբիոնի միջնորդությունը՝ «Ազգային ինքնության պահպանման խնդիրները համաշխարհայնացման համատեքստում» խորագրով միջազգային գիտաժողով կազմակերպելու և այն «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ»-ի ֆինանսավորման ծրագրին երաշխավորելու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ռ. Էլոյանը, Ա. Ջրբաշյանը և ուրիշներ:

Նշվեց, որ միջազգային գիտաժողովը կազմակերպվելու է ԵՊՀ հայ բանասիրության, պատմության, աստվածաբանության, փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետների համատեղ ուժերով:

Ինքնության պահպանության հարցերը կարևորվում են աշխարհաքաղաքական տեղաշարժերի և մշակութային փոփոխությունների համատեքստում: Վերջիններս ազդում են ազգային ինքնության որակների վրա, և այս առումով անհրաժեշտություն կա գիտական ուսումնասիրությունների, ինքնության պահպանման առաջարկվող ուղիների և այլ հարցերի քննարկմամբ ձևավորելու որոշակի հայեցակարգ: Հայ և օտարազգի մասնագետների դիտարկումները կարող են էականորեն նպաստել ինքնության խնդիրների լուծման գործին ընդհանրապես: Իսկ գիտաժողովը նպատակ ունի ոչ միայն քննարկումներ կազմակերպելու, այլև հայեցակարգային որոշ դրույթներ առանձնացնելու և պետական մարմինների հետ խորհրդատվական աշխատանքներ սկսելու:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հիմք ընդունելով հիշատակված հիմնավորումները՝ «Ազգային ինքնության պահպանման խնդիրները համաշխարհայնացման համատեքստում» խորագրով միջազգային գիտաժողով կազմակերպելու հայտը երաշխավորել մասնակցելու ՀՈԻՖՀՀ-ի ֆինանսավորման ծրագրին:

բ/ Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի միջնորդությունը՝ նույն ամբիոնի դոցենտ, բան. գիտ. թեկնածու Ս. Գրիգորյանի «Եղիշե Չարենցը և 20-րդ դարի հայ գրականությունը (Վահան Տերյան, Ավետիս Ահարոնյան)» մենագրական աշխատանքը ՀՈԻՖՀՀ-ի ֆինանսավորման ծրագրին երաշխավորելու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ռ. Էլոյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ: Նշվեց, որ մենագրությունը նվիրված է իր ժամանակաշրջանի հայ գրողների ստեղծագործության հետ Եղիշե Չարենցի ունեցած առնչությունների քննությանը: Որպես մենագրություն՝ այն կհետաքրքրի հայ նորագույն գրականության

մասնագետներին, ուսանողությանը, ուսուցիչներին և Չարենցի ու 20-րդ դարի հայ մյուս դասականների ստեղծագործությամբ հետաքրքրվող ընթերցողներին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Եղիշե Չարենցի ստեղծագործության ուսումնասիրությունը գրականագիտական մշտապես արդիական ոլորտ է, և մենագրությունը նրա ստեղծագործությունը ներկայացնում է ազգային գրականության համապատկերում՝ Ս. Գրիգորյանի «Եղիշե Չարենցը և 20-րդ դարի հայ գրականությունը (Վահան Տերյան, Ավետիս Ահարոնյան)» ուսումնասիրությունը երաշխավորել մասնակցելու ՀՈՒՖՀՀ-ի ֆինանսավորման ծրագրին:

գ/ Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի միջնորդությունը՝ նույն ամբիոնի պրոֆեսոր, բան. գիտ. դոկտոր Ա. Ավագյանի «Հակոբ Մնձուրի. Տեմուրճենց Մեծ ընկուզենին» մենագրական աշխատանքը ՀՈՒՖՀՀ-ի ֆինանսավորման ծրագրին երաշխավորելու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ռ. Էլոյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ: Նշվեց, որ մենագրությունը նվիրված է սփյուռքահայ դասական հեղինակի ստեղծագործության մեջ առկա հայկական ինքնության հարցերի քննությանը: Որպես մենագրություն՝ այն կհետաքրքրի սփյուռքահայ գրականության մասնագետներին, ուսանողությանը, ուսուցիչներին և ինքնության պահպանությամբ նախանձախնդիր ընթերցող լայն շրջանակներին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հ. Մնձուրու գրականությունը հայագիտական կարևորագույն ոլորտ է և ունի խիստ արդիական հնչեղություն՝ Ա. Ավագյանի «Հակոբ Մնձուրի. Տեմուրճենց Մեծ ընկուզենին» ուսումնասիրությունը երաշխավորել մասնակցելու ՀՈՒՖՀՀ-ի ֆինանսավորման ծրագրին:

Օրակարգի 5 - րդ հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ ամփոփվել են 2021-2022 ուստարվա ուսանողական հարցման տվյալները, գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց առավել բարձր և համեմատաբար ցածր արդյունքներ ունեցող դասախոսների տվյալները՝ ամբիոնների վարիչներին առաջարկելով ամբիոնների նիստերում քննության առարկա դարձնել խնդրահարույց դեպքերը:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ Վ. Պետրոսյանը ներկաներին հայտնեց, որ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնների միավորումից հետո միավորված ամբիոնում տիրում է բարոյահոգեբանական ոչ առողջ մթնոլորտ, առկա են ոչ նորմալ աշխատանքային

հարաբերություններ և գիտխորհրդին առաջարկեց ստեղծել ժամանակավոր հանձնաժողով, որը կուսումնասիրի իր ներկայացրած փաստերը: Ելույթ ունեցողները, սակայն, նպատակահարմար չհամարեցին նման հանձնաժողովի ստեղծումը, և, ի վերջո, գիտխորհուրդը քվեարկությամբ մերժեց ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու առաջարկը /1 կողմ, 17 դեմ, 5 ձեռնպահ/:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ
ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՅԱՆ**